ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

# ՈՐՈՇՈՒՄ

<<08>> նոյեմբերի 2021թ. N ՄՈ/1513 - 2021

ք. Արմավիր

**ՄԽԻԹԱՐ ՄԽԻԹԱՐՅԱՆԻՆ << ԱՊԱԳԱՅԻ ՀՈՎՍԵՓ ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ >> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշմամբ հաստատված կարգի 44-րդ կետով և հիմք ընդունելով <<Ապագայի Հովսեփ Կիրակոսյանի անվան միջնակարգ դպրոց>> և <<Ակնաշենի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպությունների միացյալ կոլեգիալ մարմնի (խորհրդի) նախագահի 2021 թվականի նոյեմբերի 2-ի գրությունը.

*որոշում եմ՝*

1. Մխիթար Մխիթարյանին նշանակել <<Ապագայի Հովսեփ Կիրակոսյանի անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնում, 2021 թվականի նոյեմբերի 8-ից նրա հետ կնքել աշխատանքային պայմանագիր հինգ տարի ժամկետով՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՄԱՐԶՊԵՏ՝** Недействительная подпись **Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

X

VERIFIED OCSP 08.11.2021 09:05:37 GMT+4

Подписано: MATEVOSYAN HAMBARDZUM 2809920230